

Արդեւ, Սարգիս Յ. Պալապանեան :

և սիրոյ մտերիմ գործադրութիւնն է, որ կրթա-
րեմալթն մը (Պղնձ) ընդհանրութեանը ի մուտս
նորոյ տարւոյս, աներկբայ ըրարով թէ Վերին
Նախարանամութիւնն ալ տեսնելով մեր եղբայ-
րական սէրը, պիտի օրհնէ և արգիւնաւոր ընէ
ազգային յառաջագործութեան համար ըրած հա-
սարակաց մեր ջանքը :

Սեփազի ՏԱՏԵԱՆ գերդաստանին ազգասի-
րական շնաշխարհիկ բարերարութիւնները յայտնի
է ազգին ընդհանրութեանը, ուստի աւելորդ
կրհամարմիք անոնց վրայօք միտմամբ խօսիլը :
Ի վերայ այս ամենայնի մեր երախտագիտութե-
մտերիմ զգացմունքը ազգովին և հրապարակաւ
յայտնելու աւելորդ չըլլալէն ի զատ, անհրաժեշտ
պարտաւորութիւն մըն է անտարակոյս :

Ողորմութիւնը և ազգասիրութիւնը այն
պիտի առաքինութիւններ են որ բարձրագոյն իս
կը պարծին առաջի խոռոչոյ : Տառեան փեմա-
փայլ Պօղոս ամիրան լիովին ի գործ կը դնէ այս
աստուածահաճոյ առաքինութիւնը, մանաւանդ
կոստանդնուպօլսոյ ազգային հիւանդանոցին մէջ
գտնուած տնակաց և խոշակաց համար, որուն
վերատեսչութիւնը ինչպէս յայտնի է, 4-5 տա-
րիէ հետէ յիշեալ խոռոչի մասերը (Վիրային
յանձնուած է : Վրդային հիւանդանոցը ժամա-
նակէ մը ի վեր մեծ բարեկարգութիւններ ստա-
ցաւ, անոր մէջ անոներուն և անառակ տղոց
համար յատուկ դպրոց հաստատուեցաւ, որուն
վրայօք ուրիշ անգամ խօսեր եմք : հիւանդաց,
տնակաց և անտէր որք տղայոց թիւը շատ ա-
ւելցաւ, բանդի ի սկզբան որ ընդ ամենը 260
հոգի կը գտնուէին, այժմ 430ի չափ կան, որոնք
ազգին ողորմութեանը կարօտ են ըստ տմենայն
մասին : Վստ ըստ ծնունդէն կը հետեւի թէ յիշեալ
հիւանդանոցին ծախքը շատ ծանրացաւ :

Վսեմափայլ Տառեան Պօղոս ամիրան ցանկալով
այս ծանրութիւնը ըստ կարի թիւթեցնել, հաճե-
ցաւ մարդասիրաբար ազգային հիւանդանոցին
շնորհէլ բուն իւր անձին և իւր ընտանեացը հա-
մար տեղութիւնէն ուղարկել (թային) տրուած օրա-
կան տասն հօսա միւր : Եւ այս բանին համար
յատուկ արեւսագիր մատոյց վեհափառ Վայսեր
որ իւր բարձր հրամանաւը հաստատեց, որպէս
այսուհետեւ յիշեալ օրական տասն հօսա միւր

ազգային հիւանդանոցին տրուի : Եւ ըստ օրու-
քանի մը տարի առաջ օգոստոսիայլ առատա-
գութ (Սուլթանը) մարգարտական վեհանձն
զգացմունքներէ շարժեալ տասն հինգ հօսայ միւր
շնորհած էր ազգային հիւանդանոցին, ուստի
այժմ ընդամենը օրը 25 հօսայ միւր եղաւ : Ըսել
է որ ազգին վրայէն մեծ ծանրութիւն մը վերցաւ :

Լրմնայ մեզ ուրեմն ջերմեռանդ որտի միշտ
օրհնող ըլլալ ազգովին մեր վեհափառ մեծազոր
Խնդակային երկար և երջանիկ կենացը համար,
նմանապէս ազգին մտերիմ շնորհակալեաց հա-
ւատորմը հրապարակաւ յայտնել Քրիստոսաւոր
բարեգութ (Միրային) հայցելով ի Տեառնէ որ
Տառեան ազնուաշուք ազգասէր գերդաստանը
յաւիտեան անասան կեցցէ :

Յայտնի է հասարակութեանը, որ անցեալ
ձմեռ ամենապատիւ որդազան Պատրիարքին և
վեհափայլ բարեխնամ Միսոբ ամիրային գովելի
ջանքը և շնորհիւր Ողորմաճ Բնկերութիւն մը
հաստատուեցաւ : Ի կոստանդնուպօլսոյ, որուն
նպատակն է ազգասիրութեան և տնակաց ա-
ծուի (քեօմիւր) բաժնէլ ի Վսմափառ, ի Վս-
լանկա, ի Նիխափառ և ուրիշ չքմակայ թաղերը
Նիցեալ տարի այն սաստիկ ձմեռուան ժամանակը
ազգասիրութեան ողորմութեանը ի յորտոյ պատու-
պարտելով, օրհնող և արթնօղ կը զան իրենց բա-
րերարաց երջանկութեանը համար : Վստ տարի
ևս նոյն Ողորմաճ Բնկերութիւնը ևս առաւել
հաստատուեալ հիւանդ վրայ կարգադրուելով յիշ-
եալ վեհափայլ ազգասէր Միրային խնամօքը,
շատ ազգասէր երեւել շնծիք ինքնաջօժար բա-
ժանորդ գրուեցան անոր, իւրաքանչիւրը ըստ
ատուածանին ինքնագիր պարտաւորակ տուլով
ընկերութեանը դրամոց գումարի մը համար,
որպէսզի անոր բերած տարեկան շահը ընկերու-
թիւնը ի գործ ածէ ի միութարութիւն աղ բա-
տոյց : Ստորի արգէն երկու անգամ եղաւ որ ա-
ռատապէս տնուի կըրաժմուի տնակաց :

Բարձրագոյն Սեփազի Վարդապետին կրթաբարձ
մեծաշուք Պէհնէտ Եփենտին, որ իւր բարեգութ
տիրօք մարգարտական զգացմունքը ունի, ցան-
կալով ժամանակը ըլլալ այս օրինակ աստուածա-
հաճոյ բարեգործութեան մը, յօժարամիտ հա-
ձեցաւ 5000 զն չի պարտաւորակ մը շնորհէլ

Ողորմաճ Բնկերութեանը միջոցաւ մեծապատիւ
ազգասէր Միսոբ ամիրային, որպէսզի տարուէ
տարի նոյն գումարին բերած 500 զն չ շահը՝ ազ-
գաստոյ տնուի բաժնուէլու գործածուի :

Վստիսի բարերարութիւն մը, որ առանց կրօնի
տարբերութեան անխորարար ի գործ կը դրուի
մահաճ տակաւ երեւելի պաշտօնատուրէ մը, ման-
րաման մեկնութեան կարօտ չէ կարծեմք : Վանդի
վեհանձն մարդասիրութեան նշանաւոր օրինակ
մըն է : որ լրագրոյս սկիզբը գրուած եղբայրսի-
րական յորդորին մեծ զօրութիւն կուտայ :

Կոստանդնուպօլսէն հետեւեալ նամակը կը դրնու
Յարգոյ հրատարակի :

Գերբայ տարւոյս նոյեմբեր ամսուան Բաղձափայլին մէջ յօդուած
մը տեսայ, որնոր ձեռք օրագրոյն 567 թուոյն մէջ Բաղդա-
Քեօմիան սոյնի Պարբեայի վերադարձնաւորին կը լրարկուի,
Այս յօդուածի մէջ վերապատուելի Հ. Միսոբայէլ Չեմպերիկ-
Ճեմալը կը քննարկէ Բաղձափայլին ընթերցողացը : որ Բնկեր
ստանաւորը 21-25 տարի առաջ յօդներ է, ու ես անկից գտնա-
լով ձեռք օրագրին մէջ տպել տուելով իմ ստորագրութեամբ :

Անշուշտ վերապատուելի Հայրը ինձի զգարակաւ մարտի գը-
րած չէ այս տպերը, այլ միայն չգիտնալով, ինչպէս որ ճշդիւ
պիտի յայտնեմ հիմա :

Այս ոտանաւորը 1857 թ. Կեօմիկէն 19ին իմ ընտանոցի փոք-
ժապետ պատուելի Գրիգոր Բեշարմաճեանին վաճառեցնէ ետ-
քը, տնոր թու զԵնթուն մէջ գտած եմ, որոնք ի յիշատակ փոխ-
ձանկըն կը պահեմ : Հիմա առ վերջոյ կը պատուեմ Բաղձափայլին յօդ-
ուածը կարգադրու տունը շուարեցայ, թէ այս ոտանաւորին քիւ-
թաղ Բեշարմաճեանն է թէ Չեմպերիկէճեանն : Կամ Բեշարմաճ-
ճեանը չի տու ըլլալ ու Վ. Հայրը անկից տուած ըլլալ : և կամ
վերապատուելին բուն իսկ քերթողը կը քննէ ըլլալ, ու Բեշարմաճ-
ճեանին ձեռքը անցած և փոխառած կամ յաւերթուցած ըլլալ : այս
երկու ենթադրութեանց որք ըլլալը քննել ինձի հարկ չէ : Միայն
առ կուգեմ հասկըցնել, որ ես ոչ Վ. Հայր Միսոբայէլին ըլլալ
գիտեմ, և ոչ ալ բաւ. մը մարտի իմ ստորագրութեան զօրք, ու
քիւթա : ալ ինչպէս գրուած էր, անտիկ օրինակից և իրկիցի
Վանք հիմա խօսելու իմ ստորագրութեանս վրայ :

Այս ոտանաւորը ձեռք իրկած տունս գրեթէ նամակիս մէջ, թէ
որ տպերը արժան համարիք, տնամուտ առանց ստորագրութեան
տպիցիք, ինչպէս կընոք նորէն աղքէ անցնել գրած նամակս :
բայց դուք չգիտեմ ինչ մարտի իմ ստորագրութեան զօրք, ու
քիւթ հիմա ստորագրու կըրանդաւով : ուստի կը ընդգրկեմ այժմ,
և անտուանդ կըրարեմք : որ Բեշարմաճեանը գրողն
ստուգութիւնը հաստատեք : որը ին :

Ի կոստանդնուպօլսոյ, 22 Կեօմիկէն 1850 :

Վեփա Պէրպետեան,
Գործալալ աղ Գային լրագրաց :

Պատասխանիչ զբաժնետնիւն պարոն Իվանովի :
(Երբեմնութիւն 1) (1)

Ի ժամանակս Հայկոյ նոյն էր լեզու Հայոց,
որ ինչ յաւուրս թարգմանաց մերոց և այսօր,
որում ապացոյցէ՞ք բազում անուանք բաղաբաց,
գիւղից, լեռանց, գետոց և այլոց, զոր ինչ նշա-
նակութիւն ունէին յայնժամ, ցնոյն ունին և արդ-
դորօրինակ, Նախ-իջևան, Երկ-ուռի, Երեւան,
Աւ-Նոյն-տան, Յրօնք, Սար-անդ, Կուսա-
արդ, Հայոց-ձոր, Գերե-ղման, Երմա-իւր,
Հայկա-չէն, Եր-ագած, Երեւ-իւն, Երեւ-
իւր, Գեղամա-չէն և այլք յորովք : Եւ ամ
վեցերորդ նահապետ ի Հայկոյ ըստ վրայից
Սար-իւրաւայ առ Խորենացոյն, կեցեալ 18
գարուք յառաջ բան Գրիգորի (31) իբրեւ նուաճ-
եաց ընդ իւրեւ. զկարգադրակիս, գեման Պոնտոսի,
և Խորենտանի՝ պատուէր ետ բնակաց աշխար-
հացն ուսանել զսօս և զլեզու Հայկական : Չէ
լեզու Հայոց ծնունդ Բարդեսայն, զի յետ գիւտի
Հայ տառիցն Սեփա Սահակ և այլք առ չունելոյ
ի ձեռնին յուսական մատենից զբաղում ինչ յի-
տրուոյն թարգմանեցին (32) և եթէ ըստ աստ թէ
Պ. Իվանովի նոյն էր Հայոց ընդ Եւրոպի լեզու :
ինչ էր ապաքէն առ ի թ թարգմանութե մատե-
նիցն Ստորոյն ի Հայերէնն, Վերջոյ իշեալ հան-
գամանքն համոզեն զամենայն որ բարեմիտ եղ-
րակացուցանել թէ Ստորաբն չէ լեզու Գիտակ
Հայ բարբառոյ որպէս և պարոն Իվանովի ընդ
հապառակն՝ գրել ունէին զիբն ստուգութեան
և ոչ ծամածռել ըստ կամի, և ինչ զարմանք
ընդ Ստորաբնի միացուցանելն զազգ և զլեզու

Հայոց ընդ Եւրոպոյն, յորժամ ի մերս լուսա-
ւորեալ գարուն՝ յորում լեզուաբանութիւն ծաղ-
կեալ, քաղաքականութիւն բարդաւաճեալ, հա-
ղորդակցութիւն ալիւալ ազգաց առաւել տիր-
եալ, ճանապարհորդութիւնը և օրադիւր տան
մեզ հետզհետէ զկարգաց, զնորոգութեանց զիր-
նից, զաւանդութեանց, զյատկութեանց և զպաշ-
տամանց դանդաղ ազգաց և կողմանց զճշգրիտ
տեղեկութիւնս, սակայն ի Ռուսաստան, յորոյ
ի Հարաւոյ և յԱրեւելոյ բնակին աւելի բան
կէս միլիոն Հայք, գեռ ոմանք ի նորագոյն հե-
ղինակացն չունին զճշգրիտ տեղեկութիւն զմենք,
կամ կուրօքէն գէտ գնալով ոմանց (33) և Հեռ-
մեական ըրձապատում մատենագրաց՝ գրեն և
տողեն, վարդապետն ինովկինտիս յիւրումն և
կեղեցական ոյտումն (թեան) և աստիճանաւորք
ոմանք ի ստորագրութեան կալուածոց Ռուսոյ
յայտկոյս Կովկասու, իբրեւ թէ Հայք ի կիր առ-
նուն զբարասացութիւն Պետրոսի ուրումն փութնի,
նախապատիւ համարին և երկիրպագանեն պղնձի
և փայտեայ խաչից, յետ միտումն թիւականն
զմանկունս, չունին զիւրօք բահանայութե, այլ
որ ոք ձայնաւոր է՝ առանց ձեռնագրութե քա-
հանայանայ, առնուն զ3-6 կանայս և այլ յայտի-
սի թանձր տգիտութեամբ և տոնելութեամբ
բուեալ ցնորս, Եթէ սոքա կեղծ ի միջ Հայոց
հաղբաւոր ամօք՝ ոչ կարացին հասու լինել տե-
սական և նիւթական կեղծեաց, միթէ պատճառ-
դիւ զարմանալով ընդ Ստորաբն, որոյ տեղեկա-
լ Հայոց, զԲարդեսայն, կամ Գրիգորի և զԼրագրացի
ի Տիգրանակերտ քաղաքի, զի խօսէին ի մի բար-
բառ, հետեւեցուցանէ զգործ լեզուի Հայոց ծը-
նունդ նոյն : այլ որպէս ի հանրագիտակ բա-

ռարանի Ռուսոյն բացայայտի, լեզու Հայոց
ունի զորպիսի և իցէ ազգակցութիւն և ոչ ընդ
միումն ի չլիակայ ազգայն բաց ի կարծել իմ
նմանակցութեան ընդ Սանկիթագոյն : Այլ
թէ վերագրեալ վարդապետն և աստիճանաւորն
գրեցին զայն ամենայն ստուգութեամբ, թող ինքնին
բարեմիտ Ռուսք ճանարտեցեն, որք 30-50 ա-
մօք կեան ի սահմանս Սեփա Հայոց և բաղմիս
առաջակայ գտեալ արարողութեանց խորհրդոց
միտումն թեան, պատիկ և ձեռնագրութեան, գի-
տեն հաւաստեալ թէ առ Հայս գոն խորհուրդք
պատիկ և ձեռնագրութեան և զք թիւփատումն
ոչ ի հեթանոսութեան և ոչ ի քրիստոնէութե :

6. Գրէ պարոն Իվանովի թէ որովհետեւ ընդ
երկար մնացին ի ներքոյ տեղութեանց Եւրոպոյ,
Պարսից, Վիլկիպոլոց և այլոց, ևս և երեւ գաղ-
թականութիւնը և յարձակմունք Ներայեցոց,
Բուլղարաց, Վրանաց և Վիլկիպոլոց և յարե-
թէ՝ անշուշտ այլայլել կամ ուժգինս խանգարի-
ունքը լեզու Հայոց, որում պատասխանելի է՝ առ
պատակութիւնը Բուլղարաց, Վիլկիպոլոց և
այլոց չէր յաղագս տարածաւորել զլեզու իւրեանց
որպէս խորամանկ Զոմայեցոց էր բնաւորութիւն
այլ կողմաւորել սակա զինչ և զտուրուածս բնա-
կեղցն անդէն, և ընդ երկար մնալովն Հայոց
ընդ տեղութեամբ Պարսից, Յունաց, Եւրոպոյ
և այլոց՝ չէր չէն մեծամեծ իմն ազգեցութիւնը
կամ փոփոխութիւնը ի կանոն և ի կարգութե
գրարաւ լեզուի Հայոց, բայց ի փոխ սունկը բա-
նի մի բառ և ձե խօսից յաշխարհիկ աստ լիստ

(Սեփաբն Կեօմիկէն Ռուսով) :
Կարապետ Ժարապետ Երեւանցի
Փաթեան արեւի Լիւթանի :

(1) Տես լրագրոյս 376 և 378-379 թիւերը :
(31) Պատմութիւն Խորենացոյ գիրք ա . գլ 34 :
(32) Պատմութիւն Խորենացոյ, գիրք 4 . գլ 34 :

(33) Ստան ա . երկ 296 :

(34) Ստան գ . երկ 145, 144 :

Այսպէս է որ պատուէրէն Պերսեպոսէան պարոն Լ. Լեւոնիսը երբ որ Բողոք առ Բիւրնակէ սուրբ Սարգիսի վերնագրով ոտանուորք յուղարկեց մեզ ի տալ գրութիւն, խնդրած էր որ անանուն հրատարակուի և սակայն մեր չգիտնալով այս բանին բուն պատճառը և կարծելով թէ իւր աշխատասիրութիւնն է, ստորագրութիւնը դրինք տակը: Բայց այժմ նոյն հրատարակութեան երեք ամիս ետքը վերապատուելի Հայր Սարգիս Երեմեայեան արձան կրհամարի ծանուցանել հատորակութեանը Բողոքի միջոցաւ թէ նոյն ոտանուորքը սակեց 21-25 տարի առաջ իւր գրած ոտանուորներէն առնուած, փոփոխուած և ի կարգի դրուած է: Երբ պատասխանը վերադառնալ նամակին մէջ տեսան մեր ընթերցողները, որոց կրկնաբար բնիւ և գատողութիւն ընել այս խնդրոյն վրայ: Երբ կողմանէ կրսեմք, թէ պատուէրէն Պերսեպոսէանը թէպէտեւ ինքը գրած չէ յիշեալ ոտանուորքը, բայց անոր նմանը կրնայ գրել, ինչպէս յայտնի է ուսումնականաց դատուն: Հետեւեալ կարծեմք թէ, քանի մը տող ոտանուորի համար հրատարակական թերթի մը միջոցաւ, իմ շինածս է բուշինսդ չէ ըսել՝ ուսելի ողջակիս հասակի կը պատշաճի քան թէ ծերունոջարդ պատկառելի վարդապետի մը:

Դառնանակէ մը ի վեր քաղաքին մէջ և անոր շրջակաները աւազակութիւնները այն աստիճան շատցած էին, որ հասարակաց ապահովութիւնը փոխադրել մէջ կը դնուէր: Աւստի նախ, նգիւ կուսակալ բարձրագոյն Զաւրի փաշան որուն հայրական բարեխնամ հոգ տեսնուէր յայտնի է ամենուն, արժան հաւաքեցաւ արտաքին կարգի ազդու միջոցներ ի գործ դնել այս չարագործաց ընկերութիւնը ձեռք ձգելու և բոլորովին ջնջելու համար: Բազմաթիւ թիւներէն, պարգևներ, ուրիշ խոտորմներ, վերջապէս բան մը չնայուելու ստիպանութեան զօրքը յորդորելու և սիրտ տալու համար խորձ խօսքով բարձրագոյն փաշային ի գործ դրած միջոցները լիովին յաջողեցաւ, և անցեալ շաբթուան ի վեր գլխաւոր գողերէն 8-10 հոգի ձեռք անցան, 2-3 հոգին մեռած 1-2 հոգին վերադարձան և միւսները աղջ, Բանտարկեալ գողերուն յայտարարութիւններէն շատ բաներ երևան ելան, իրենց ընկերներէն և մասնակիցներէն շատերը բռնուեցան, և անոնց ապստամբարանները ըստ մեծի մասին յայտնուեցան: Յաւաքի է մեզ ծանուցանել որ այս գողերը Պոլսէ գեղը օտար տէրութեանց հպատակ պատուաւ որ անձանց քանի մը տներուն մէջ ապստամբարան կը գտնուէր: Ուր կառաւ վարութեան զօրքը պարտաւորեցաւ մանկէ շատ ներքին թիւներէ և փոխաներէ ետեւ ձեռք ձգելու աւազակները, բայց դժբաղդութեամբ ուստիկանութեան զօրքերէն քանի մը հոգի վերադրեցան: որոցմէ երկու հոգիին վերջը մահու չափ ըլլալով, հետեւեալ մեռան: Ետեւեալ յայտնի ան մեզադի չլինար մնալ յիշեալ անձանց զինուոր, որով ապստամբարան կուտային գողերուն: Թէպէտեւ փոխանները ըստ քանի մը անգամ ի վեր կերպիւ աւազակութիւնը քաջաբերել ըսել է քաղաքին մէջ և անոր շրջակաները:

Վերջապէս մեր բարձրագոյն կուսակալը առնալ կերպ քննութիւնները հետադուրս թիւները մարդ ստիպան ոգւով շարունակ ի գործ կը դնէ: Աստի երկրպագութիւն չունիմք թէ քիչ ժամանակուան մէջ հատարակութիւնը բոլորովին պիտի ազատի աւազակաց շարագործութիւններէն: Արմատ մեզ ուրեմն աղօթող ըլլալ աղօթիլն մեր բարեխնամ կուսակալ բարձրագոյն Զաւրի փաշային երջանիկ կենացը համար, որ այրքան մարդ ստիպութեամբ ինտիք կը տանի նահանգիս ապահովութիւնը հաստատուն պահելու:

Սուրբ Երուստեմէն հետեւեալ յօդուածը կը հաղորդէ մեզ Գեղտեմբերի 6ին:

Սիմի առաւօտու ի 6 Գեղ, գողութեան արձանուան վեհափառ իշխան Կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի, Յոյն հանգիստեալ պատարագ մատուցին ի վերայ ամենատուրք և կենսատու Գեղեղմանին Բերտոսի, ի պատիւ Նորին Վեհափառութեան և ան և մերս սրբազան Պատրիարք Գեղտեմբէր քաջ նախանձամեղիք բարեւոյն մատուցելու:

Լանդ իսկ հոգեւորին հանգիստեալ, նա զի և գըթաւատ խնամք Նորին Կայսերութեան զինչ ընդհատ պահաւ գտանին ի վերայ աղբիս, առաջարկեաց ժողովանէլ զիսկաղործ պատարագին ի վերայ յարութեան Գեղեղմանին, զոր և կատարեաց գերազանց աւագ լուսարար Գեղեղմանի կողմէն հանգեցնել փառաւորագոյն հանգիստ և ի ձայն քաղաքաւոր մեղեգեաց, մաղթելով վեհափառ Կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Վ. զամենայն երկնածիր բարիս: Բնդ այս մեծապէս գոհութեան յուրան զուրախութիւն իւրեանց միտքներն Ռուսաց և Յունաց, և զեր իւրեանց զոր ունին ընդ միմեան ընդ մեզ նորոգ իմն ապացուցիւք հաստատեցին, և այն ոչ օտարտի ինչ պատճառանք, այլ անդէն բրիտոսական հաւատոցն աղբակցութեամբ, որ աղբիւրն է խաղաղութեան և սիրոյ, զիսկ պատարագին աւագ թարգմանն հանգեցնել երկու վարդապետաց չոգան ի կողմանէ մերս սրբազան Հոր ի շնորհաւորել զոր տարեգործի անուան Կայսերն, ի վանս Յունաց, և անտի սուրբ Երջանտիտն Ռուսաց:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 30 Դեկտեմբերի:

Երտարին քաղաքականութիւնը մեծ հանդարտութեան մէջ է: Բարձրագոյն Իրան օտար տէրութեանց հետ ունեցած բարեկամական կապակցութիւնները կը շարունակուին և օրընտրեւս առաւել հաստատուելու վրայ են: Աստի առաջին կառավարութեան ջանքը միմիայն ներքին բարեկարգութեան վրայ է: որոնք շարունակ ի գործ կը դրուին մայրաքաղաքին մէջ, և ասկէ կարգաւ կը տարածուին տէրութեան բոլոր նահանգները, ուսկից հասած վերջի լուրերը ընդհանրապէս խիստ յաջող են ի մասին հասարակաց ապահովութեան և անդորրութեան:

Կայսերական բարձրագոյն հրամանաւ Զաւրի փաշին նախորդ ընդհանուր կուսակալ կարգեցաւ: Դրբանուստայոյ նախորդ հարկապահանջ Վերալ Կաֆի եֆէնտին նախագահ անուանեցաւ ընտրութեան և բարեւարութեան ժողովոյն: որ Զաւրի փաշին համար հաստատուեցաւ:

Դեհիւսպէր Պոստիկին նահանգին մէջ Զաւրի փաշին տեղակալ (գալմապա) կարգեցաւ, և այս առթիւ Վերալ փաշին աստիճան ստացաւ: Ինչի եֆէնտին, որ տէրութեան ժողովոյն արձանագրութեանց գրաստան վերադառնալէն էր, Վերալի կառավարիչ կարգեցաւ:

Բիւրալ Կուսուք փաշան, որ տէրութեան ժողովոյն անդամ էր, միանգամայն հասարակաց կրթութեան ժողովոյն անդամ անուանեցաւ:

Թնդ անթարանի վերադառնալ բարձրագոյն տիւ (Համալ Սէթի) փաշային երկու որդիք Վեհիմէտ և Սեյիմ պէյը և Նիլալետին Սահմանաւոր մօտ օրերս պատիւ ունեցան վեհափառ Սուլթանին ներկայանալու, որ հաճեցաւ իրանի աստիճան շնորհելու անոնց:

Երտարայրդ պարոն Եղուարդ Օհրապը, որ գրեթէ տասներկու տարեկանէն Բարձրագոյն Իրան ընդհանուր հիւպատոսի պաշտօնը խիստ արժանաւորութեամբ կրկնէ ի յնտն, և առայժմ քանի մը ամսուան համար Կոստանդնուպոլիս կը գտնուի, պատիւ ունեցաւ տոնոյ 14ին օգոստոսի: Կայսեր ներկայանալու, որ խիստ մարդասիրութեամբ և քաղաքութեամբ ընկալաւ զիշեալ հայկազուն բանիւրն պաշտօնատար:

Նոյն օրը Յունաստանի գեղական պարոն Սեթաքոս ևս ընկերութեամբ իւր գեղականատան պաշտօնատարաց Զորադանի արքայական պալատը գնաց իւր գեղականութեան հաստատութիւնը օգոստոսի: Կայսեր մատուցանելու: Վեհափառ Սուլթանը արժանաւոր յարգութեամբ և սիրով ընկալաւ յիշեալ գեղականը:

Տարեգլխոյն առաջի օրը ըստ նոր տուածին Նիկողայ գեղական փոխափալ սուր Սթըլթիստ Քէնիկը աղբային փառաւոր հայկերէն մը ըրաւ որուն հետեւեալ կարգաւ շքեղաշուք հանգէս մը: Սուր Սթըլթիստ և Էտի Քէնիկը ինչպէս միշտ, այս անգամ ևս զմայլեցուցին զինականները իրենց վեհանախական մարդասէր քաղաքութեամբ:

Երտարայրդ: Յիշեալ փոխափալ գեղականը տոնոյ 28ին բարձրագոյն Սեթ Կապադոսին պալատը գնաց, ուր կը դառնուէր նաեւ արտաքին գործոց պաշտօնակոն, և խորհրդակցութիւն մը ունեցաւ այս երեքի պաշտօնակալաց հետ:

Երտարայրդ ամենապատիւ Տէր Սեթ փանտոն նախորդ սրբազան Պատրիարքը, որ իւր վիճակաց բարեկարգութեանը պատճառաւ Կառնանդնուպոլիս եկած էր, ամսոյ 23ին վերադառնալ իւր հոգեւոր պաշտօնին կրթութեամբ:

Վերալ փաշը, որ երկար ժամանակ մեծ իշխանութիւն և աղբակցութիւն ունեցաւ իւրեանի կառավարութեամբ վրայ, գեղականութեան 19ին մեռաւ ի Բարձրագոյն ի հասակի գրեթէ 94 ամաց: Եւ ծերունի իշխանին յուղարկութեան հանդէսը հետեւեալ օրը խիստ փառաւորութեամբ կատարուեցաւ համեմակաւ Հայոց եկեղեցին:

Վերալ փաշին երեց որդին Զաւրի և իւր կրտսեր որդին Սիմի որ քանի մը տարի կայ մահմանական կրօնը ընդունեցաւ, իրենց հօրը մահուանէն մէկ երկու շաբաթ յառաջ փոխանեցաւ էին:

Մեհապատիւ սրբազան Պատրիարքին և աղբային գեղական ժողովոյն միջնորդութեամբ Բարձրագոյն Կուսուք գոհունակութեան ակամա զարդ պատուական նշան մը շնորհեց Կապադոսին առաջնորդ գերապատիւ տէր Կապրիէ Սրբազան արքեպիսկոպոսին, և այս օրերս արքայական հրամանագրոյն հետ յուղարկեցաւ իրեն:

Յայտնի է հասարակութեանը թէ ամենապատիւ Յափը սրբազան Պատրիարքը գրեթէ 25 տարեկէ ի վեր Կոստանդնուպոլիս վիճակաց առաջնորդութիւնը կրկնէր, և բոլոր ժողովուրդը մեծապէս գոհ էր Կորին Սրբազանութեան հայրական խնամատարութեան: Բայց յիշեալ Սրբազանը պարտաւորելով ի Կոստանդնուպոլիս միայ իւր բարձր պաշտօնին պատճառաւ պիտի չկրնայ այսուհետեւ անձամբ հովուել զիշեալ վիճակները: Վասնորոյ հաճութեամբ աղբային գեղական ժողովոյն նախ առաջնորդութիւնը յանձնեց իւր հոգեւոր արդիւն արժանապատիւ տէր Վերալ ծայրագոյն վարդապետին, և այս առաջ նորոգութեան վերաբերեալ արքունի հրովարտելու և ակնադարձ նշանը շնորհուցաւ անոր:

Եւս տնօրէնութիւն խնամալով Կոստանդնուպոլիս ժողովուրդը, իրենց գոհունակութիւնը յայտնեցին յատուկ գրութեամբ, միանգամայն ցաւելով մեծապէս որ իրենց ամենապատիւ վաղեմի հոգեւոր տուրք հովուին ուղեկի խնամատարութեան պիտի դրկուին:

Վնուսիք թէ արժանապատիւ տէր Վերալ ծայրագոյն վարդապետը ժամանակիս պահանջ մանցը համեմատ խոհեմութեամբ ի գործ դնելով իրեն յանձնուած այս բարձր պաշտօնը, պիտի աշխատի գարտունները բարեկարգելու, և ուսմանը ծաղկեցնելու: Կոստանդնուպոլիս վիճակաց մէջ, և առիթ պիտի տայ մեզ գովութեամբ յիշատակելու իւր բարի բարի կարգադրութիւնները ի միջնորդութեան Վրայ:

Կոստանդնուպոլիս ամենապատիւ սրբազան Պատրիարքին փոխանորդ գերապատիւ տէր Սեթաքոս ծայրագոյն վարդապետը ընկերութեամբ արժանապատիւ Հանադարեանց տէր Կարապետ վարդապետին և արժանապատիւ Վրիգոր վարդապետին, նմանապէս պատրիարքարանի գործաւ կալ յարգամեծար Սրբազան աղբային եկեղեցեաց հոգաբարձու քանի մը ուրիշ աղբային Յունաց ամենապատիւ սրբազան Պատրիարքին գնաց ի շնորհաւորութիւն տարեգործին նը Օհրեան, որ արժանաւոր մեծարանք և սիրով ընդունեցաւ զիշեալ այցելուները, ժաման աւելի եղբայրաբար խոսակցելով անոնց հետ:

Գերապատիւ տէր Սեթաքոս վարդապետը և իւր ընկերակիցները Յունաց պատրիարքարանին ելելով սուրբ տաճարը մասն երկրպագութիւն ընելու, ուր բահանայր և գալիք սկսան շարաւ կաններ երգել ի պատիւ եկեղեցին: Յետ այնորիկ Քէնեպի մօտ Սթըլթիս ըստ ամեկեղեցոյն փաշը գալիք, ուր սուրբ Երտարայրդ Յունաց սրբազան Պատրիարքը կը նստի: Եւս տեղ պատեւ հովութիւն ունեցան նախ Վերալ սրբազան Պատրիարքին հետ տեսութիւն ընելու, որ քիչ ժամանակէ ի վեր մայրաքաղաքը կը գտնուէր քանի մը ամիսէն ետեւ ի Կոստանդնուպոլիս վիճակաց:

